Կազմված է 17. 11. 2022թ.

Բաղկացած է 14 էջից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ

Օրինակ №

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ»

սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության հիմնադիրների

17.11.2022թ.-ին կայացրած որոշմամբ

Արձանագրություն թիվ 1

տնօրեն՝

ՆՈՐԱՅՐ ԱԼԹՈՒՆՅԱՆ

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

17. 11. 2022թ.

Գ Ր Ա Ն Ց Վ Ա Ծ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

գրանցման համար՝ 21.11.2022

ՀՎՀՀ՝ 01330894

21.11.2022թ.

աշխատակից՝

«ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2022թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. **«ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ»** սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն (այսուհետ՝ Ընկերություն) իրավաբանական անձ համարվող, շահույթ ստանալու նպատակ հետապնդող կազմակերպություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Ընկերության իրավունակությունը ծագում է նրա պետական գրանցման և դադարում է լուծարման ավարտի պահից: Իր գործունեության ընթացքում Ընկերությունը ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով և սույն կանոնադրությամբ:

2. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

3. Ընկերությունը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար: Ընկերության մասնակիցները պատասխանատու չեն Ընկերության պարտավորությունների համար և կանոնադրական կապիտալում իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

4. Հայաստանի Հանրապետությունը կամ համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար, ինչպես նաև Ընկերությունը պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության կամ համայնքների պարտավորությունների համար:

5. Ընկերությունն իրավունք ունի սահմանված կարգով բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս:

6. Ընկերությունը կարող է ունենալ իր ֆիրմային անվանմամբ կլոր կնիք հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով, դրոշմներ և ձևաթղթեր, օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքանիշ և այլ նշաններ:

7. ***Ընկերության ֆիրմային անվանումն է.***

հայերեն լրիվ՝ «ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» սահմանափակ պատասխանատվությամբ Ընկերություն

կրճատ՝ «ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ

ռուսերեն լրիվ՝ " Интеллиджент Менеджмент " Общество с ограниченной ответственностью

կրճատ՝ " Интеллиджент Менеджмент " ООО

անգլերեն լրիվ՝ "INTELLIGENT MANAGEMENT" Limited Liability Company

կրճատ՝ "INTELLIGENT MANAGEMENT" LLC

8. *Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝*
ՀՀ ք.Երևան Վահագնի թաղ. Գանձասարի փող. 17, (փոստ 0088):

II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

9. Ընկերության գործունեության նպատակն է Հայաստանի Հանրապետությունում և նրա սահմաններից դուրս տնտեսական գործունեություն իրականացնելու ճանապարհով շահույթ ստանալը:

10. Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած գործունեության տեսակներ: Ընկերության կողմից այնպիսի գործունեությունը իրականացնելու իրավունքը, որով զբաղվելու համար անհրաժեշտ է հատուկ թույլտվություն (լիցենզիա), ծագում է նման թույլտվությունը ստանալու պահից կամ դրանում նշված ժամկետում և դադարում է դրա գործունեության ժամկետի ավարտով:

III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ

11. Ընկերության կանոնադրական կապիտալի չափը կազմում է 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ, որը բաժանված է 2 բաժնեմասի, 1 (մեկ) բաժնեմասի անվանական արժեքը կազմում է՝ 2,500,000 (երկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ: Բոլոր 2 բաժնեմասերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և սեփականության իրավունքով պատկանում են Ընկերության մասնակիցներին, որոնց մասին տեղեկությունները բերված են սույն կանոնադրության հավելվածում:

12. Ընկերության կանոնադրական կապիտալում մասնակիցների կամ Ընկերության մեջ ընդգրկվող երրորդ անձանց կողմից ոչ դրամային ավանդներ ներդնելու դեպքում դրանց դրամական գնահատականը կատարվում է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 29 հոդվածով սահմանված կարգով:

IV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ

13. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը հնարավոր է միայն այն ամբողջությամբ վճարելուց հետո:

14. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը կարող է իրականացվել Ընկերության գույքի հաշվին, մասնակիցների լրացուցիչ ներդրումների հաշվին կամ Ընկերության մեջ ընդունվող երրորդ անձանց ավանդների հաշվին:

15. Ընկերության գույքի հաշվին կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում համապատասխանորեն մեծանում է նաև մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքը՝ անփոփոխ թողնելով դրանց չափը:

16. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը նրա մասնակիցների լրացուցիչ ավանդների և Ընկերություն ընդունվող երրորդ անձանց ավանդների հաշվին իրականացվում է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 33 հոդվածով սահմանված կարգով:

17. Ընկերության մասնակցի դիմումի հիման վրա այդ մասնակցի կողմից լրացուցիչ ավանդ ներդնելու միջոցով կանոնադրական կապիտալի ավելացման վերաբերյալ որոշումն ընդունվում է Ընկերության մասնակիցների կողմից՝ միաձայն:

18. Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը իրականացվում է Ընկերության մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքների նվազեցման և (կամ) Ընկերությանը պատկանող բաժնեմասերի մարման ճանապարհով:

19. Ընկերության մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքը նվազեցնելու ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքում մասնակիցների բաժնեմասերի չափերը չեն փոխվում:

20. Եթե երկրորդ կամ յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա Ընկերությունը պարտավոր է նվազեցնել իր կանոնադրական կապիտալը, իսկ եթե զուտ ակտիվների արժեքը կազմում է բացասական մեծություն, Ընկերությունը ենթակա է լուծարման:

V. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

21. Ընկերության հիմնադիրների /մասնակիցների/ ավանդները, դրանց հաշվին ստեղծված, ինչպես նաև Ընկերության գործունեության ընթացքում արտադրված կամ ձեռք բերված գույքն Ընկերությանն են պատկանում սեփականության իրավունքով, և Ընկերությունն ազատ է իր հայեցողությամբ տիրապետել, օգտագործել և տնօրինել դրանք:

22. Ընկերությունը, որպես սեփականություն, ունի իր մասնակիցների գույքից առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով:

23. Ընկերությունը կարող է իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

24. Ընկերության գույքը և պարտավորությունները հաշվի են առնվում ինքնուրույն հաշվեկշռում:

VI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

25. Ընկերության մասնակիցներ (հիմնադիրներ) կարող են լինել ֆիզիկական և իրավաբանական անձինք, ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետությունը և համայնքները՝ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

26. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն Ընկերության մասնակից (հիմնադիր) չեն կարող լինել:

27. Մեկ մասնակից ունենալու (մնալու) դեպքում Ընկերության միակ մասնակիցն իրականացնում է գործող օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ Ընկերության մասնակիցներին վերապահված իրավունքները և պարտականությունները:

28. Ընկերության մասնակիցների թիվը չպետք է գերազանցի 49-ը, հակառակ դեպքում այն մեկ տարվա ընթացքում պետք է վերակազմավորվի բաց բաժնետիրական Ընկերության կամ առևտրային կոոպերատիվի: Նշված ժամկետում չվերակազմավորվելու դեպքում Ընկերությունը ենթակա է լուծարման:

VII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

29. Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն.

29.1. մասնակցել Ընկերության կառավարմանը, տեղեկատվություն ստանալ Ընկերության գործունեության մասին, ծանոթանալ նրա հաշվապահական գրքերին և այլ փաստաթղթերին.

29.2. ստանալ Ընկերության գործունեությունից ստացվող՝ օրենքով սահմանված շահույթի մասը.

29.3. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.

29.4. իր բաժնեմասը (դրա մասը) օտարել Ընկերության մեկ կամ մի քանի մանակիցների կամ երրորդ անձանց.

29.5. անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից ցանկացած պահի դուրս գալ Ընկերությունից.

29.6. հայցով դիմել դատարան Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից ընդունված, գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների գանգատարկման նպատակով.

29.7. Ընկերության լուծարման դեպքում ստանալ պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած գույքի իր հասանելիք մասը կամ դրա արժեքը.

29.8. օրենքով սահմանված կարգով գրավ դնել Ընկերության գույքում իր բաժնեմասի (դրա մասի) իրավունքը:

30. Ընկերության մասնակիցներն ունեն նաև օրենքով, սույն կանոնադրությամբ և Ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ սահմանված այլ իրավունքներ:

31. Ընկերության մասնակիցները պարտավոր են.

31.1. չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ, բացի օրենքով սահմանված դեպքերից.

31.2. իրենց գործողություններով չխոչընդոտել Ընկերության գործունեության նորմալ գործընթացին.

31.3. ժամանակին և բարեխղճորեն կատարել Ընկերության նկատմամբ ստանձնած պարտավորությունները:

32. Ընկերության մասնակիցները կրում են նաև օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտականություններ:

VIII. ՄԱՍՆԱԿՑԻ ԴՈՒՐՍ ԳԱԼՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ

33. Ընկերության մասնակիցը, անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից, իրավունք ունի անկացած ժամանակ դուրս գալ Ընկերությունից:

34. Ընկերության մասնակցի՝ Ընկերությունից դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից նրա բաժնեմասը փոխանցվում է Ընկերությանը: Ընկերությունը պարտավոր է այդ պահից՝ վեց ամսվա ընթացքում, մասնակցին վճարել բաժնեմասի նրա վճարած մասի արժեքը: Դուրս եկող մասնակցի և Ընկերության համաձայնությամբ դուրս եկող մասնակցին կարող է տրվել նրա բաժնեմասի լրիվ վճարված մասի արժեքին համապատասխան գույք:

35. Դուրս եկող մասնակցին հասանելիք Ընկերության գույքի մասը կամ դրա արժեքը որոշվում է դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահին Ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվությունների հիման վրա:

36. Եթե Ընկերության կանոնադրական կապիտալում որպես ավանդ ներդրվել է գույքի օգտագործման իրավունք, ապա համապատասխան գույքը վերադարձվում է Ընկերությունից դուրս եկող մասնակցին: Նման գույքի բնականոն մաշվածության հետևանքով նվազած արժեքը չի հատուցվում:

37. Ընկերությանը փոխանցված բաժնեմասերը հաշվի չեն առնվում մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից որոշումների ընդունման ժամանակ քվեարկության արդյունքները որոշելիս, ինչպես նաև Ընկերության լուծարման դեպքում գույքը բաշխելիս:

38. Ընկերության մասնակցին պատկանող բաժնեմասն Ընկերությանն անցնելուց հետո Ընկերությունը պարտավոր է այն տնօրինել «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 19 հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

IX. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ԲԱԺՆԵՄԱՍԸ ՓՈԽԱՆՑԵԼԸ

39. Ընկերության մասնակիցն իրավունք ունի Ընկերության կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ ձևով օտարել տվյալ Ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների:

40. Ընկերության մասնակիցներն իրենց բաժնեմասերին համամասնորեն, ինչպես նաև՝ Ընկերությունը օգտվում են մասնակցի բաժնեմասը (դրա մասը) գնելու նախապատվության իրավունքից:

41. Ընկերության մասնակիցը, որը ցանկանում է վաճառել իր բաժնեմասը (դրա մասը), պարտավոր է այդ մասին գրավոր տեղյակ պահել Ընկերությանը՝ նշելով գինը և վաճառքի մյուս պայմանները: Ընկերությունն այդ մասին գրությամբ՝ պատվիրված նամակով կամ անձամբ հանձնելով, հայտնում է Ընկերության մյուս մասնակիցներին: Այն դեպքում, երբ Ընկերության մասնակիցները տեղեկացվելու օրվանից մեկ ամսվա ընթացքում չեն օգտվում բաժնեմասը (դրա մասը) գնելու նախապատվության իրավունքից, ապա նախապատվության իրավունքից կարող է օգտվել Ընկերությունը՝ սույն կանոնադրության 42-րդ կետով սահմանված կարգով:

42. Ընկերության մասնակիցը, որը ցանկանում է վաճառել իր բաժնեմասը (դրա մասը), պարտավոր է այդ մասին գրավոր տեղյակ պահել Ընկերությանը՝ նշելով գինը և վաճառքի մյուս պայմանները, որոնք պետք է նույնը լինել Ընկերության մասնակիցներին առաջարկված պայմանների և գնի հետ: Եթե Ընկերությունը տեղեկացվելուց հետո մեկ ամսվա ընթացքում չի օգտվում բաժնեմասը (դրա մասը) գնելու նախապատվության իրավունքից, ապա բաժնեմասը (դրա մասը) կարող է օտարվել երրորդ անձանց՝ նույն պայմաններով և ոչ պակաս այն գնից, որն առաջարկվել էր Ընկերության մասնակիցներին:

43. Բաժնեմասի օտարումը իրականացվում է պարզ գրավոր ձևով ձևակերպված պայմանագրով (ՀՀ քաղաքացիական Օրենսգրքով նախատեսված դեպքերում՝ վավերացված նոտարական կարգով):

44. Բաժնեմասը ձեռք բերողին փոխանցվում են Ընկերության մասնակցի մինչև բաժնեմասի օտարումը ծագած իրավունքներն ու պարտականությունները:

45. Ընկերության մասնակցի մահվան (վերակազմակերպման) ժամանակ կանոնադրական կապիտալում նրա բաժնեմասն անցնում է մասնակցի ժառանգներին (իրավահաջորդներին)՝ Ընկերության մյուս մասնակիցների համաձայնությամբ:

46. Ժառանգների (իրավահաջորդների) Ընկերության մասնակից դառնալուց հրաժարվելու դեպքում Ընկերությունը պարտավոր է նրանց վճարել համապատասխան բաժնեմասը սույն կանոնադրության 35-րդ կետով սահմանված կարգով:

X. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՌԱՑՆԵԼԸ, ՄԱՍՆԱԿՑԻ ԲԱԺՆԵՄԱՍԻ ՎՐԱ ԲՌՆԱԳԱՆՁՈՒՄ ՏԱՐԱԾԵԼԸ

47. Ընկերության մասնակիցը (մասնակիցները), որը (որոնք) գումարային առումով տնօրինում է (են) Ընկերության առնվազն 10% բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել Ընկերության այլ մասնակցի հեռացումն Ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում Ընկերության բնականոն գործունեությունը:

48. Ընկերությունից հեռացված մասնակցի բաժնեմասն անցնում է Ընկերությանը: Ընկերությունը հեռացված մասնակցին վճարում է նրա բաժնեմասի արժեքը, որը որոշվում է սույն կանոնադրության 35-րդ կետով սահմանված կարգով:

49. Ընկերության մասնակցի պարտքերի համար պարտատերի պահանջով նրա բաժնեմասի վրա կարող է բռնագանձում տարածվել միայն այդ մասնակցի պարտքերը մարելու համար այլ գույքի անբավարարության դեպքում՝ դատարանի վճռի հիման վրա:

50. Ընկերության մասնակցի բաժնեմասը կարող է բռնագրավվել միայն օրենքով նախատեսված դեպքերում:

51. Ընկերության մասնակցի բաժնեմասի բռնագանձումը կամ բռնագրավումը իրականացվում է «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 20 հոդվածով սահմանված կարգով:

52. Ընկերության գույքում մասնակցի ամբողջ մասի վրա բռնագանձում տարածելը կամ բաժնեմասն ամբողջությամբ բռնագրավելը դադարեցնում է նրա մասնակցությունն Ընկերությանը:

XI. ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԵՎ

53. Ընկերությունը կարող է տարեկան մեկ անգամ մասնակիցների ընդհանուր ժողովի որոշմամբ իրականացնել իր շահույթի բաշխումն Ընկերության մասնակիցների միջև:

54. Բաշխման ենթական շահույթը բաշխվում է Ընկերության մասնակիցների միջև ըստ Ընկերության կանոնադրական կապիտալում նրանց բաժնեմասերի չափերի:

55. Ընկերությունն իրավունք չունի որոշում ընդունել շահույթի բաշխման մասին կամ Ընկերության մասնակիցներին վճարել շահույթ, որի բաշխման մասին որոշումն արդեն ընդունված է՝

55.1. մինչև Ընկերության կանոնադրական կապիտալի լրիվ վճարումը.

55.2. եթե որոշման ընդունման պահին Ընկերության զուտ ակտիվների արժեքը փոքր է նրա կանոնադրական կապիտալից կամ այդ չափից փոքր կդառնա նման որոշման ընդունման արդյունքում.

55.3. օրենքով նախատեսված այլ դեպքերում:

XII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ՖՈՆԴԵՐԸ

56. Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է ստեղծվել պահուստային ֆոնդ, բայց ոչ պակաս անոնադրական կապիտալի 20 (քսան) տոկոսից, որը ձևավորվում է Ընկերության շահույթից կատարվող ատկացումներից: Ընկերության պահուստային հիմնադրամի ձևավորման կարգը սահմանվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից:

57. Պահուստային հիմնադրամն օգտագործվում է Ընկերության կորուստները ծածկելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում:

58. Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

59. Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են ստեղծվել նաև այլ ֆոնդեր, որոնց ձևավորման կարգը և օգտագործման ուղղությունները սահմանվում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից:

XIII.ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

60. Ընկերության կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը, Ընկերության տնօրենների խորհուրդը և գործադիր մարմինը՝ տնօրենը:

61. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը նրա մասնակիցների ընդհանուր ժողովն է (այսուհետ՝ ընդհանուր ժողով), որն ունի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

62. Ընկերությունը մեկ անձի կողմից հիմնադրվելու կամ Ընկերությունում մեկ մասնակից մնալու դեպքում ընդհանուր ժողովի իրավասություններն իրականացնում է Ընկերության միակ մասնակիցն իր գրավոր որոշմամբ:

63. Ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

63.1. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, Ընկերության պլանների և դրանց կատարման վերաբերյալ հաշվետվությունների հաստատումը.

63.2. Ընկերության կանոնադրության, դրա լրացումների և փոփոխությունների, նոր խմբագրությամբ կանոնադրության հաստատումը.

63.3. Ընկերության կանոնադրական կապիտալի չափի փոփոխումը.

63.4. Ընկերության տնօրենների խորհրդի (այսուհետ՝ Տնօրենների խորհուրդ) քանակական կազմի հաստատումը, նրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, Տնօրենների խորհրդի կանոնակարգի հաստատումը.

63.5. գործադիր մարմինների ձևավորումը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության գործադիր մարմնի լիազորություններն առևտրային կազմակերպությանը կամ անհատ ձեռնարկատիրոջը (կառավարիչ) տալու հարցերը.

63.6. Ընկերության վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) ընտրությունը, նրա վարձատրության և/կամ ծախսերի փոխհատուցման չափերի սահմանումը, վերստուգիչ հանձնաժողովի անդամների (վերստուգողի) լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ընդ որում՝ վերստուգիչ հանձնաժողով (վերստուգող) ձևավորվում է, եթե ընդհանուր ժողովը անհրաժեշտ է համարում վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) առկայությունը կամ Ընկերության մասնակիցների թիվը գերազանցում է 20-ը. Վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգողի) գործառույթները կարող է իրականացնել Ընկերության ընդհանուր ժողովի կողմից հաստատված աուդիտորը.

63.7. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

63.8. Ընկերության տարեկան հաշվետվությունների և հաշվապահական հաշվեկշիռների հաստատումը, շահույթների ու վնասների բաշխումը.

63.9. այլ ընկերություններին կամ կազմակերպություններին մասնակից (հիմնադիր) լինելու մասին որոշման ընդունումը.

63.10.Ընկերության պաշտոնատար անձանց գույքային պատասխանատվության ենթարկելու մասին որոշման ընդունումը.

63.11. Ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի հաստատումը.

63.12. Ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշման ընդունումը.

63.13. խոշոր գործարքներ կատարելու մասին որոշման ընդունումը, բացառությամբ սույն կանոնադրության 102.4-րդ ենթակետով նախատեսված դեպքերի.

63.14. Ընկերության աուդիտի իրականացման որոշման ընդունումը.

63.15. Ընկերությունը վերակազմակերպելու կամ լուծարելու մասին որոշման ընդունումը.

63.16. լուծարման հանձնաժողովի (լուծարողի) նշանակումը և լուծարման հաշվեկշռի ընդունումը.

63.17. «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

64. Ընկերության գործունեության տարեկան արդյունքները հաստատվում են Ընկերության հերթական ընդհանուր ժողովում, որն անցկացվում է ֆինանսական տարվա ավարտից ոչ շուտ, քան 2 ամիս և ոչ ուշ, քան 6 ամիս անց:

65. Հերթական ընդհանուր ժողովից բացի գումարվող ժողովները համարվում են արտահերթ:

66. Արտահերթ ընդհանուր ժողովները գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

67. Հերթական ընդհանուր ժողովները հրավիրվում են Ընկերության գործադիր մարմնի կողմից:

68. Եթե Ընկերությունում ձևավորվել է խորհուրդ, ապա արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրվում է խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Ընկերության գործադիր մարմնի կամ պահանջը ներկայացնելու պահի դրությամբ Ընկերության՝ գումարային առումով առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնեմասի սեփականատեր մասնակցի (մասնակիցների) պահանջով: Ընկերությունում խորհուրդ չձևավորվելու դեպքում արտահերթ ընդհանուր ժողովը հրավիրվում է Ընկերության գործադիր մարմնի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ կամ պահանջը ներկայացնելու պահի դրությամբ Ընկերության՝ գումարային առումով առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնեմասի սեփականատեր մասնակցի (մասնակիցների) պահանջով: Պահանջը ներկայացնելու պահի դրությամբ Ընկերության՝ գումարային առումով առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնեմասի սեփականատեր մասնակցի (մասնակիցների) պահանջով արտահերթ ընդհանուր ժողով գումարվելու դեպքում ժողովի գումարման ձևը և օրակարգը սահմանում է (են) այն գումարելու պահանջը ներկայացրած մասնակիցը (մասնակիցները):

Եթե պահանջում նշված ժամկետում իրավասու մարմինն արտահերթ ընդհանուր ժողովի գումարման մասին որոշում չի ընդունում կամ որոշում է ընդունում դրա գումարումը մերժելու մասին, ապա արտահերթ ընդհանուր ժողովը կարող են գումարել ժողովի գումարման մասին պահանջ ներկայացրած անձինք:

69. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն (առանց ձայնի իրավունքի, խորհրդակցական ձայնի իրավունքով) գլխավոր տնօրենը, վերստուգիչ հանձնաժողովի անդամները (վերստուգիչ հանձնաժողովի առկայության դեպքում), Ընկերության ֆինանսական տնօրենը, Ընկերության իրավաբանական բաժնի ղեկավարը, Ընկերության տնօրենների խորհրդի անդամները, իսկ Ընկերության մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ նաև՝ փոխտնօրենը, գլխավոր հաշվապահը, աուդիտ իրականացնող անձը:

70. Ընդհանուր ժողով հրավիրող մարմինը կամ անձինք պարտավոր են ժողովի անցկացման օրվանից 20 օր առաջ այդ մասին պատվիրված նամակներով ծանուցում է Ընկերության բոլոր մասնակիցներին: Ծանուցման մեջ պետք է նշված լինեն ընդհանուր ժողովի անցկացման տեղը, ամսաթիվը, ժամը և առաջարկող օրակարգը:

71. Ընկերության ցանկացած մասնակից իրավասու է առաջարկ ներկայացնել ընդհանուր ժողովի օրակարգում լրացուցիչ հարցերի ընդգրկման մասին ոչ ուշ, քան դրա անցկացումից տասն օր առաջ: Բացառությամբ Ընդհանուր ժողովի իրավասությանը չվերաբերող կամ օրենքի պահանջներին չհամապատասխանող հարցերի, լրացուցիչ հարցերն ընդգրկվում են ընդհանուր ժողովի օրակարգում:

72. Ընդհանուր ժողով հրավիրող մարմինը կամ անձինք իրավասու չեն փոփոխություններ կատարել ընդհանուր ժողովի օրակարգում ընդգրկվելու նպատակով առաջարկված լրացուցիչ հարցերի ձևակերպումներում:

73. Այն դեպքում, երբ Ընկերության մասնակիցների առաջարկությամբ ընդհանուր ժողովի օրակարգի նախնական տարբերակում կատարվում են փոփոխություններ, Ընդհանուր ժողով հրավիրող մարմինը կամ անձինք պարտավոր են դրա անցկացումից ամենաուշը հինգ օր առաջ ծանուցել Ընկերության մասնակիցներին օրակարգում կատարված փոփոխությունների մասին՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածով սահմանված կարգով:

74. Ընդհանուր ժողովի օրակարգը նախապատրաստելիս Ընկերության մասնակիցներին ներկայացվելիք տեղեկատվությանն ու նյութերին են դասվում Ընկերության տարեկան հաշվետվությունը, վերստուգիչ հանձնաժողովի (վերստուգիչի) և աուդիտորի եզրակացությունն Ընկերության տարեկան հաշվետվությունների և ամենամյա հաշվապահական հաշվեկշիռների ստուգումների արդյունքների վերաբերյալ, տեղեկություններ Ընկերության գործադիր մարմնում, խորհրդում և վերստուգիչ հանձնաժողովում ընդգրկվելու համար առաջադրվող թեկնածուի (թեկնածուների) մասին, Ընկերության կանոնադրության մեջ կատարվող փոփոխությունների և լրացումների նախագիծը կամ Ընկերության կանոնադրության նախագծերը նոր խմբագրությամբ, Ընկերության ներքին փաստաթղթերի նախագծերը, ինչպես նաև Ընկերության կանոնադրությամբ նախատեսված տեղեկատվությունը (նյութերը), եթե վերը նշված հարցերն ընդգրկված են ընդհանուր ժողովի օրակարգում:

75. Սույն կանոնադրության 77-րդ կետում նշված տեղեկատվությունը և նյութերը պետք է ընդհանուր ժողովի անցկացումից առաջ՝ քսան օրվա ընթացքում, տրամադրվեն Ընկերության մասնակիցներին՝ Ընկերության գործադիր մարմնի շենքում դրանց հետ ծանոթանալու նպատակով: Ընկերությունը պարտավոր է ընկերության մասնակցի պահանջով վերջինիս տրամադրել նշված փաստաթղթերի պատճենները: Այդ պատճենների տրամադրման դիմաց ընկերության կողմից գանձվող վճարը չի կարող գերազանցել դրանց պատրաստման վրա կատարված ծախսերը:

76. Ընդհանուր ժողովի բացումից առաջ կատարվում է Ընկերության ժամանած մասնակիցների գրանցում: Ընկերության մասնակիցները Ընդհանուր ժողովին մասնակցում են համատեղ մասնակցությամբ (այդ թվում՝ հեռախոսակապի, տվյալների հեռահար փոխանցման կամ կապի այլ միջոցներով, որոնք ապահովում են իրական ժամանակի ռեժիմում բոլոր մասնակիցների միմյանց միջև հաղորդակցությունը) կամ հեռակա քվեարկության եղանակով /հարցման միջոցով/:

77. Ընկերության մասնակիցը ընդհանուր ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազոր ներկայացուցիչի միջոցով:

78. Մասնակցի ներկայացուցիչը կարող է մասնակցել Ընկերության ընդհանուր ժողովին միայն օրենքով սահմանված կարգով ձևակերպված լիազորագրի առկայության դեպքում: Մասնակիցը պահպանում է Ընկերության ընդհանուր ժողովում մասնակցելու առաջնային իրավունքը անկախ իր կողմից ներկայացուցչին տրված լիազորագրից:

79. Ընկերության ընդհանուր ժողովն իր նիստը վարելու համար Ընկերության մասնակիցների կազմից ընտրում է ժողովի նախագահ:

80. Ընդհանուր ժողովի որոշումը կարող է ընդունվել առանց ժողով անցկացնելու (առանց օրակարգի հարցերի քննարկման և քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով Ընկերության մասնակիցների համատեղ ներկա գտնվելու)՝ անցկացնելով հեռակա քվեարկություն (հարցման միջոցով): Նման քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կամ փոխանցվող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը և դրանց փաստաթղթային հաստատումն ապահովող կապի այլ միջոցներով փոխանակելու միջոցով:

81. Հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն ընդհանուր ժողովի ձայնի իրավունք ունեցող մասնակիցներին՝ լրացրած քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ: Էլեկտրոնային, հեռատիպային կամ հեռախոսային կապի միջոցներով ժողովի անցկացման քվեարկության դեպքում քվեաթերթիկները (այդ թվում՝ էլեկտրոնային քվեաթերթիկները) պետք է տրամադրվեն ընդհանուր ժողովի ձայնի իրավունք ունեցող մասնակիցներին ժողովի անցկացման պահից առնվազն 7 օր առաջ:

82. Ընկերության ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե դրան մասնակցում են Ընկերության մասնակիցների ձայների ընդհանուր թվի կեսից ավելին տնօրինող մասնակիցները:

83. Ընկերության յուրաքանչյուր մասնակից ընդհանուր ժողովում ունի Ընկերության կանոնադրական կապիտալում իր լրիվ վճարված բաժնեմասին համապատասխան ձայների քանակ:

84. Ընկերության ընդհանուր ժողովում Ընկերության լուծարման, ինչպես նաև սույն կանոնադրությամբ նախատեսված այլ դեպքերում որոշումներն ընդունվում են բոլոր մասնակիցների մասնակցությամբ՝ միաձայն, կանոնադրության, դրա լրացումների և փոփոխությունների հաստատման, կանոնադրական կապիտալի փոփոխության, ինչպես նաև Ընկերության վերակազմակերպման մասին որոշումներն ընդունվում են Ընկերության մասնակիցների (նրանց ներկայացուցիչների) ձայների ընդհանուր թվի առնվազն երկու երրորդի մեծամասնությամբ, մնացած հարցերի վերաբերյալ՝ մասնակիցների ձայների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ:

85. Ընդհանուր ժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ:

86. Ընդհանուր ժողովի որոշմամբ օրակարգի որոշ հարցերի վերաբերյալ որոշումները կարող են ընդունվել քվեաթերթիկների միջոցով կատարվող քվեարկություններով: Այդ դեպքում ընդհանուր ժողովը սահմանում է մասնակիցներին քվեաթերթիկների տրամադրման կարգը, քվեաթերթիկների ձևն ու բովանդակությունը, քվեարկության արդյունքների հաշվառման և արձանագրության կազմման կարգը:

87. Ընդհանուր ժողովի անցկացման հետ կապված և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով ու սույն կանոնադրությամբ չկարգավորված հարցերը կարգավորվում են Ընդհանուր ժողովի որոշմամբ:

88. Ընկերության տնօրենը կազմակերպում է ընդհանուր ժողովի արձանագրության վարումը:

89. Ընկերության Տնօրենների խորհուրդը հանդիսանում է Ընկերության ընթացիկ՝ ընդհանուր ժողովների միջև ընկած ժամանակահատվածում գործող կառավարման մարմին: Խորհրդի կազմը պետք է կազմված լինի առնվազն հինգ և առավելագույնը յոթ անդամներից, որոնք նշանակվում են Ընդհանուր ժողովի կողմից:

90. Խորհուրդը գործում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից ընդունված կանոնակարգին համապատասխան, որով սահմանվում են Խորհրդի նիստերի գումարման և անցկացման կարգը, ինչպես նաև Խորհրդին և դրա գործունեությանը վերաբերող այլ հարցեր:

91. Տնօրենների խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան Ընդհանուր ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում արտահերթ Ընդհանուր ժողովի կողմից՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով: Տնօրենների խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո:

92. Տնօրենների խորհրդի անդամների լիազորությունների ընդհանուր տևողությունը չի սահմանափակվում:

93. Ընդհանուր ժողովը կարող է որոշում ընդունել Տնօրենների խորհրդի ցանկացած անդամի (բոլոր անդամների) լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին:

94. Տնօրենների խորհրդի անդամ կարող է լինել նաև Ընկերության մասնակից չհանդիսացող անձը:

95. Տնօրենների խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները, խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

96. Տնօրենների խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:

97. Տնօրենների խորհրդի նախագահը՝

97.1. կազմակերպում է խորհրդի աշխատանքները.

97.2. գումարում է խորհրդի նիստերը և նախագահում է դրանք.

97.3. կազմակերպում է նիստերի արձանագրության վարումը.

97.4. նախագահում է ժողովներում, եթե կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:

98. Տնօրենների խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները խորհրդի որոշմամբ կատարում է խորհրդի անդամներից մեկը:

99. Տնօրենների խորհրդի իրավասությանն են պատկանում.

99.1. Արտահերթ ընդհանուր ժողովի հրավիրումը՝ «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքի և սույն կանոնադրությանը համապատասխան.

99.2. Ընկերության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների ստեղծումը. վերակազմակերպումը, լուծարումը և դրանց կանոնադրությունների հաստատումը.

99.3. Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների իրականացման նկատմամբ վերահսկողությունը.

99.4. Ընկերության կողմից իր զուտ ակտիվների արժեքի 20-50 տոկոսը կազմող արժեքով ուղղակի կամ անուղղակի գույք ձեռք բերելու, օտարելու կամ օտարման հնարավորության հետ կապված խոշոր գործարքներ կատարելու մասին որոշման ընդունումը.

99.5. Ընկերության խորհրդատվական խորհրդի ձևավորումը, անդամների լիազորությունների դադարեցումը, խորհրդատվական խորհրդի աշխատակարգի հաստատումը:

100. Տնօրենների խորհրդի իրավասությունները չեն կարող փոխանցվել Ընկերության տնօրենին:

101. Ընկերության ընթացիկ գործերի ղեկավարումն իրականացնում է ընդհանուր ժողովի կողմից ընտրված (նշանակված) գործադիր մարմինը՝ տնօրենը:

102. Ընկերության և Ընկերության տնօրենի միջև կնքվում է պայմանագիր, որը սահմանում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունները, նրա վարձատրության պայմանները, պայմանագրի ժամկետը, պայմանագրի դադարեցման և լուծարման հիմքերը և այլ դրույթներ, որոնք անհրաժեշտ են և չեն հակասում գործող օրենսդրությանը:

103. Ընկերության տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի Ընդհանուր ժողովի և Տնօրենների խորհրդի բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերից:

104. Ընկերության տնօրենը հաշետու է Ընդհանուր ժողովին և Տնօրենների խորհրդին:

105. Ընկերության տնօրենը՝

105.1. տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, գործարքներ է կատարում Ընկերության անունից.

105.2. կազմակերպում է Ընդհանուր ժողովի և Տնօրենների խորհրդի որոշումների կատարումը.

105.3. ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

105.4. գործում է առանց լիազորագրերի.

105.5. տալիս է լիազորագրեր՝ Ընկերության անունից ներկայացուցչություն կատարելու իրավունքի համար, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

105.6. գործող օրենսդրությամբ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.

105.7. բանկերում բացում է Ընկերության հաշվարկային և այլ հաշիվներ, այդ թվում՝ տարադրամային հաշիվներ.

105.8. Ընկերության ընդհանուր ժողովի հաստատմանն է ներկայացնում Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը.

105.9. Տնօրենների խորհրդի հաստատման է ներկայացնում Ընկերության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները,

105.10. իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

105.11. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Ընկերության աշխատակիցներին.

105.12. աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցառումներ:

106. Ընկերության տնօրենն իրավունք չունի մասնակիցների համար պարտադիր որոշումներ կայացնելու:

107. Ընկերության տնօրենն այլ կազմակերպություններում կարող է վճարովի պաշտոններ զբաղեցնել միայն Ընկերության ընդհանուր ժողովի համաձայնությամբ:

108. Ընկերության տնօրենն օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն է կրում իր գործողությունների հետևանքով Ընկերությանը պատճառած վնասի համար:

109. Տնօրենը հասցված վնասի դիմաց պատասխանատվությունից ազատվում է Ընկերության և տնօրենի միջև կնքված պայմանագրով նախատեսված դեպքերում:

110. Ընկերության տնօրենների խորհուրդը, ելնելով Ընկերության գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու անհրաժեշտությունից, կարող է ձևավորել խորհրդատվական խորհուրդ:

111. Խորհրդատվական խորհուրդը կարող է բաղկացած լինել առավելագույնը 15 անդամներից:

112. Խորհրդատվական խորհրդի կազմում կարող են ընգրկվել յուրաքանչյուր ոլորտի հեղինակավոր մասնագետներ, ովքեր կարող են հանդիսանալ ինչպես ՀՀ քաղաքացիներ, այնպես էլ՝ օտարերկրյա քաղաքացիներ:

113. Խորհրդատվական խորհուրդ օժտված չէ կառավարման լիազորություններով:

114. Խորհրդատվական խորհրդի իրավասություններն են՝

114.1. Ընկերության գործունեությանը, նպատակների և խնդիրներին համապատասխան՝ Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների և ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել Տնօրենների խորհրդին և Ընկերության տնօրենին, ներառյալ խորհրդատվություն շուկայի ընդհանուր վիճակի և ներդրողների տրամադրվածության վերաբերյալ.

114.2. Ապահովել մասնագետների և ներդրումային համայնքի հասանելիությունը Ընկերության համար, երբ դա բխում է Ընկերության շահերից.

114.3. անհրաժեշտության դեպքում խորհրդատվություն տրամադրել Ընկերության ղեկավար անձնակազմին Ընկերության ռազմավարական ծրագրերի մշակման վերաբերյալ և իրականացնել դրա կառավարման փոփոխության գործընթացը.

114.4. Կարգավորման ենթակա հարցերի վերաբերյալ տրամադրել խորհրդատվություն, ինչպես նաև իրավիճակից ելնելով ցուցաբերել աջակցություն համապատասխան մարմինների հետ փոխհարաբերություններում.

114.5. Անցկացնել 1-1 դասընթացներ Ընկերության ղեկավար անձնակազմի հետ համապատասխան փորձի և գիտելիքների փոխանակման համար.

114.6. Ընկերության աշխատակիցներից ընտրել անձանց՝ աջակցելով նրանց անձնական և մասնագիտական աճին և ժամանակի ընթացքում վերահսկել նրանց առաջընթացը.

114.7. Վերահսկել Ընկերության ղեկավար անձնակազմի մոտիվացիայի մակարդակը՝ դրա վիճակի մասին տեղեկացնելով Ընկերության ընդհանուր ժողովին և Տնօրենների խորհրդին:

114.8. Ընկերության տնօրենին և Տնօրենների խորհրդին ուղղորդել և տրամադրել աջակցություն, որը կարող է հանգեցնել ներդրումների հոսքի՝ բաժնեմասերի վաճառքի և/կամ ֆինանսավորման փոխարկելի այլ գործիքների միջոցով.

114.9. Ֆինանսական միջոցների ներգրավման մեթոդների վերաբերյալ գնահատական տալ Ընկերության տնօրենին և Տնօրենների խորհրդին, եթե կանխատեսվում է ներդրողների հետ հանդիպումներ և/կամ առկա է որոշակի բանակցային գործընթաց.

114.10. ըստ անհրաժեշտության քննարկել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության արդյունքները և դրանց վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել Տնօրենների խորհրդին և Ընկերության տնօրենին,

115. անհրաժեշտության դեպքում խորհրդատվական խորհրդի անդամները, ինչպես բոլորով միասին այնպես էլ առանձին, կարող են ներկայացնել Ընկերության շահերը և/կամ Ընկերության ծառայություններն ու ապրանքները՝ միջոցառումների և կոնֆերանսների ընթացքում՝ նախապես համաձայնեցնելով Ընկերության տնօրենի հետ:

116. Խորհրդատվական խորհրդի որոշումները և առաջարկությունները պարտադիր բնույթ չեն կրում, սակայն դրանք ենթակա են քննարկման Ընդհանուր ժողովի, Տնօրենների խորհրդի և Ընկերության տնօրենի կողմից:

XIV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

117. Ընկերության վերակազմակերպումը կատարվում է.

117.1. ընդհանուր ժողովի որոշմամբ.

117.2. Ընկերության մասնակիցների թիվը 49-ը գերազանցելու դեպքում.

117.3. օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի վճռով:

118. Ընկերության վերակազմակերպումն իրականացվում է ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով: Ընկերության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

119. Ընկերության լուծարման հիմքերն են.

119.1. Ընկերության ընդհանուր ժողովում Ընկերության լուծարման մասին ընդունած որոշումը;

119.2. Ընկերության կանոնադրությամբ նախատեսված գործունեության ժամկետի լրանալը կամ այն նպատակին հասնելը, հանուն որի Ընկերությունը ստեղծվել էր;

119.3. օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի վճիռը:

120. Ընկերության լուծարումն իրականացվում է ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

121. Ընկերությունը համարվում է լուծարված, իսկ նրա գոյությունը՝ դադարած, պետական գրանցման պահից:

«ԻՆԹԵԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ -ի

կանոնադրության հավելված

«ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ -ի մասնակիցների
ՑՈՒՑԱԿ

Մասնակցի անուն,հայրանուն, ազգանուն, քաղաքացիությունը, անձնագրի տվյալները, հասցեն:	Բաժնեմասի քանակը (հատ)	Բաժնեմասի չափը %	Ստորագրություն
Հայաստանի Հանրապետության քաղաքացի Լևոն Նորայրի Այթունյան նույնականացման քարտ՝ 008495053, տրված 26.07.2016 թ.-ին, 011-ի կողմից, բնակության վայրի հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Եզնիկ Կողբացու փ. 53 բն. 12	1	50%	
Հայաստանի Հանրապետության քաղաքացի Արևշատ Վարդանի Մելիքսեթյան նույնականացման քարտ՝ 014666333, տրված 12.07.2022 թ.-ին, 099-ի կողմից, բնակության վայրի հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վահագնի թաղ. Սիփանի 4	1	50%	

Կազմված է «03» «ապրիլի» 2023թ.
Բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ-ի
մասնակիցների 2023 թվականի ապրիլի 3-ի
արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ
(թիվ 03042023-01 արձանագրություն)

Տնօրեն՝
Լևոն Ալթունյան

«03» «ապրիլի» 2023թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
22.11.2022թ.
գրանցման համար՝ 271.110.1277977
ՀՎՀՀ՝ 01330894,
22.11.2022թ. գրանցված կանոնադրության
թիվ 2 փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի կողմից

«03» «ապրիլի» 2023թ.

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

«ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

2023թ.

1. «Ինթելլիջենթ Մենեջմենթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1. Կանոնադրության 11 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 6,250,000 ՀՀ դրամ, որը բաժանված է 4 բաժնեմասերի: Երկու բաժնեմասերից յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 2,500,000 ՀՀ դրամ, իսկ մյուս երկու բաժնեմասերից յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 625,000 ՀՀ դրամ:

Ընկերության բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են, լրիվ վճարված են և պատկանում են Ընկերության մասնակիցներին, որոնց ցանկը և յուրաքանչյուրի ունեցած բաժնեմասի քանակը և չափը ներկայացված է սույն կանոնադրության բաղկացուցիչ մասը հանդիսացող հավելվածում:»,

1.2. Կանոնադրության հավելվածը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հավելված

«Ինթելլիջենթ Մենեջմենթ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության

կանոնադրության

«Ինթելլիջենթ Մենեջմենթ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Մասնակցի քաղաքացիություն, անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի (գրանցման) տվյալները, ՀԾՀ, հասցեն (գտվելու վայրը)	**Բաժնեմասի Քանակը և անվանական արժեքը**	**Բաժնեմասերի չափը %**
ՀՀ քաղաքացի Լևոն Նորայրի Ալթունյան (անձնագիր՝ 008495053, տրված՝ 26.07.2016թ. 011-ի կողմից, ՀԾՀ՝ 3610580178, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Եզնիկ Կողբացու փ., 53շ., 12բն.)	1 հատ, 2,500,000 ՀՀ դրամ	40%
ՀՀ քաղաքացի Արևշատ Մելիքսեթյան (անձնագիր՝ 014666333, տրված՝ 12.07.2022թ. 099-ի կողմից, ՀԾՀ՝ 2008830063, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0088, Աջափնյակ, Վահագնի թղմ., Սիփան փ., տ. 4)	1 հատ, 2,500,000 ՀՀ դրամ	40%

ՀՀ քաղաքացի Մարիա Յուրիի Մելիքսեթյան (անձնագիր՝ BA3456067, տրված՝ 01.04.2019թ. 004-ի կողմից, ՀԾՀ՝ 5301830597, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի 32շ., 32բն.)	1 հատ, 625,000 ՀՀ դրամ	10%
ՌԴ քաղաքացի Նորայր Լևոնի Ալթունյան (անձնագիր՝ AA0007023, տրված՝ 19.10.2016թ. 002-ի կողմից, ՀԾՀ՝ 1210951169, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հյուսիսային պողոտա, 6շ., բն. 66)	1 հատ, 625,000 ՀՀ դրամ	10%

Սույն կանոնադրության փոփոխությունը հանդիսանում է «Ինթելլիջենթ Մենեջմենթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրության անբաժանելի մասը:

Կազմված է «06» «ապրիլի» 2023թ.
Բաղկացած է 3 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ-ի
մասնակիցների 2023 թվականի ապրիլի 6-ի
արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ
(թիվ 07042023-01 արձանագրություն)

Տնօրենի լիազորված անձ
Մարիամ Դովլաթյան

«06» «ապրիլի» 2023թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
22.11.2022թ.
գրանցման համար՝ 271.110.1277977
ՀՎՀՀ՝ 01330894,
22.11.2022թ. գրանցված կանոնադրության
թիվ 03 փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի կողմից

10.04. 2023թ.

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

«ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

2023թ.

1. «Ինթելլիջենթ Մենեջմենթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1. Փոփոխել Ընկերության կանոնադրության 11-րդ կետը և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 6,250,000 ՀՀ դրամ, որը բաժանված է 2 բաժնեմասերի: Բաժնեմասերից յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 3,125,000 ՀՀ դրամ:

Ընկերության բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են, լրիվ վճարված են և պատկանում են Ընկերության մասնակիցներին, որոնց ցանկը և յուրաքանչյուրի ունեցած բաժնեմասի քանակը և չափը ներկայացված է սույն կանոնադրության բաղկացուցիչ մասը հանդիսացող հավելվածում:»,

1.2. Կանոնադրության հավելվածը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հավելված

«Ինթելլիջենթ Մենեջմենթ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության

կանոնադրության

«ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Մասնակցի քաղաքացիություն, անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի (գրանցման) տվյալները, ՀԾՀ, հասցեն (գտվելու վայրը)	**Բաժնեմասի Քանակը և անվանական արժեքը**	**Բաժնեմասերի չափը %**
ՀՀ քաղաքացի Լևոն Նորայրի Ալթունյան (անձնագիր՝ 008495053, տրված՝ 26.07.2016թ. 011-ի կողմից, ՀԾՀ՝ 3610580178, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Եզնիկ Կողբացու փ., 53շ., 12բն.)	1 հատ, 3,125,000 ՀՀ դրամ	50%
ՀՀ քաղաքացի Արևշատ Վարդանի Մելիքսեթյան (անձնագիր՝ 014666333, տրված՝ 12.07.2022թ. 099-ի կողմից, ՀԾՀ՝ 2008830063,	1 հատ, 3,125,000 ՀՀ դրամ	50%

հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0088, Աջափնյակ, Վահագնի թղմ., Սիփան փ., տ. 4)		

Սույն կանոնադրության փոփոխությունը հանդիսանում է «Ինթելլիջենթ Մենեջմենթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրության անբաժանելի մասը:

Կազմված է «19» «դեկտեմբերի» 2023թ.
Բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ-ի
մասնակիցների 2023 թվականի դեկտեմբերի 19-ի
արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ
(թիվ 19122023-01 արձանագրություն)

Տնօրեն՝
Լևոն Ալթունյան

«19» «դեկտեմբերի» 2023թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
22.11.2022թ.
գրանցման համար՝ 271.110.1277977
ՀՎՀՀ՝ 01330894,
22.11.2022թ. գրանցված կանոնադրության
թիվ _____ փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի կողմից

26.12 2023թ.

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

«ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

2023թ.

1. «Ինթելլիջենթ Մենեջմենթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրության մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1. Փոփոխել Ընկերության կանոնադրության 8-րդ կետը և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ **ՀՀ ք. Երևան, Ամիրյան փողոց 1**»:

Սույն կանոնադրության փոփոխությունը հանդիսանում է «Ինթելլիջենթ Մենեջմենթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրության անբաժանելի մասը:

Կազմված է «24» «փետրվարի» 2025թ.
Բաղկացած է 2 թերթից
Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 01

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ-ի
միակ մասնակցի 2025 թվականի փետրվարի 24-ի
թիվ 20250224-01 որոշմամբ

Լիազորված անձ
Էդուարդ Թեքյոզյան

«24» «փետրվարի» 2025թ.

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
22.11.2022թ.
գրանցման համար՝ 271.110.1277977
ՀՎՀՀ՝ 01330894,
22.11.2022թ. գրանցված կանոնադրության
թիվ 04 փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության իրավաբանական
անձանց պետական ռեգիստրի կողմից

26 փետրվար 2025թ.

«ԱՆԴԵՐՍԵՆ ԼԻԳԱԼ» ՓԲԸ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

«ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

2025թ.

1. «Ինթելլիջենթ Մենեջմենթ» ՍՊԸ-ի Կանոնադրության հավելվածը փոփոխել և շարադրել հետևյալ խմբագրությամբ.

Հավելված
«Ինթելլիջենթ Մենեջմենթ»
սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
կանոնադրության

«ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Մասնակցի քաղաքացիություն, անունը, հայրանունը, ազգանունը, անձնագրի (գրանցման) տվյալները, ՀԾՀ, հասցեն (գտվելու վայրը)	**Բաժնեմասի Քանակը և անվանական արժեքը**	**Բաժնեմասերի չափը %**
ՀՀ քաղաքացի Արևշատ Վարդանի Մելիքսեթյան (անձնագիր՝ 014666333, տրված՝ 12.07.2022թ. 099-ի կողմից, ՀԾՀ՝ 2008830063, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0088, Աջափնյակ, Վահագնի թղմ., Սիփան փ., տ. 4)	2 հատ, 6,250,000 ՀՀ դրամ	100%

Սույն կանոնադրության փոփոխությունը հանդիսանում է «Ինթելլիջենթ Մենեջմենթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրության անբաժանելի մասը:

«ԱՆԴԵՐՍԵՆ ԼԻԳԱԼ» ՓԲԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2025-02-26

«ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ»
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար	271.110.1277977
Հիմնադրման տարի	2022
Գրանցման ամսաթիվ	2022-11-22
Գործունեության ժամկետ	Անժամկետ
Կարգավիճակ	Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	53653990
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	01330894
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	49117977
Էլ. փոստ	nlaltunyan@gmail.com
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	Ամիրյան փ. / Շ / 1 ԿԵՆՏՐՈՆ 0010 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
Հեռախոս	-

Գործադիր մարմնի ղեկավար

Անուն Ազգանուն	ԱՐԵՎՇԱՏ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ՎԱՐԴԱՆԻ
Անձնագրային տվյալներ	014666333 2022-07-12 099
Հասցե	ՎԱՀԱԳՆԻ ԹՂՄ. ՍԻՓԱՆԻ Փ. / Տ / 4 ԱՋԱՓՆՅԱԿ 0029 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

«ԱՆԴԵՐՍԵՆ ԼԻԳԲԼ» ՓԲԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2025-02-26
«ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ»
Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին

Կանոնադրական կապիտալի չափը ՀՀ դրամով՝ **6,250,000.00**

Մասնակիցներ

Անուն Ազգանուն / Անվանում	Գրանցամատյանում գրառման ամսաթիվ	Բաժնեմասի չափը	Բաժնեմասի չափը ՀՀ դրամով	
ԱՐԵՎՇԱՏ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ՎԱՐԴԱՆԻ Անձնագիր հ/հ 014666333 2022-07-12 տրվ. 099 ի կողմից ՀԾՀ 2008830063 Հասցե՝ ՎԱՀԱԳՆԻ ԹՂՄ. ՍԻՓԱՆ Փ. / S / 4 ԱՋԱՓՆՅԱԿ 0088 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ	2022-11-22	100 %	6250000	

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2022-12-26	**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն**
2023-02-28	**Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում**
2023-04-05	**Մասնակիցների փոփոխություն** **Կանոնադրական կապիտալի փոփոխություն** **Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)**
2023-04-10	**Մասնակիցների փոփոխություն** **Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)**
2023-12-26	**Իրավաբանական հասցեի փոփոխություն** **Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)**
2024-03-07	**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն**
2024-04-04	**Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի**
2025-02-26	**Մասնակիցների փոփոխություն** **Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)**

Քաղվածքը տրամադրող՝ _____ **ԱՆԴԵՐՍԵՆ ԼԻԳԼԻ Դ**
ստորագրություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2025-03-11

«ԻՆԹԵԼԼԻՋԵՆԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)

Գրանցման համար	271.110.1277977
Հիմնադրման տարի	2022
Գրանցման ամսաթիվ	2022-11-22
Գործունեության ժամկետ	Անժամկետ
Կարգավիճակ	Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:
Իրավաբանական անձի ծածկագիր (ՁԿԴ)	53653990
Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ)	01330894
Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր)	49117977
Էլ. փոստ	meliksetyanarevshat@gmail.com
Կայք	-

Գտնվելու վայրը

Հասցե	Ամիրյան փ. / Շ / 1 ԿԵՆՏՐՈՆ 0010 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ
Հեռախոս	-

Գործադիր մարմնի ղեկավար

Անուն Ազգանուն	ԱՐԵՎՇԱՏ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ՎԱՐԴԱՆԻ
Անձնագրային տվյալներ	014666333 2022-07-12 099
Հասցե	ՎԱՀԱԳՆԻ ԹՂՄ. ՍԻՓԱՆԻ Փ. / Տ / 4 ԱՋԱՓՆՅԱԿ 0029 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Էջ 2

Տեղեկություններ իրավահաջորդության / իրավանախորդության վերաբերյալ

Իրավանախորդ(ներ) **գրառված չեն**

Տեղեկությունների կանոնադրական կապիտալի չափի մասին

Կանոնադրական կապիտալի չափը ՀՀ դրամով՝ **6,250,000.00**

Մասնակիցներ

Անուն Ազգանուն / Անվանում	Գրանցամատյանում գրառման ամսաթիվ	Բաժնեմասի չափը	Բաժնեմասի չափը ՀՀ դրամով	
ԱՐԵՎՇԱՏ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ ՎԱՐԴԱՆԻ Անձնագիր հ/հ 014666333 2022-07-12 տրվ. 099 ի կողմից ՀԾՀ 2008830063 Հասցե՝ ՎԱՀԱԳՆԻ ԹՂՄ. ՍԻՓԱՆ Փ. / S / 4 ԱՋԱՓՆՅԱԿ 0088 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ	2022-11-22	100 %	6250000	

Պետական միասնական գրանցամատյանում կատարված փոփոխություններ

Գրանցման ամսաթիվ	Փոփոխություններ
2022-12-26	**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն**
2023-02-28	**Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի ընդունում**
2023-04-05	**Մասնակիցների փոփոխություն** **Կանոնադրական կապիտալի փոփոխություն** **Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)**
2023-04-10	**Մասնակիցների փոփոխություն** **Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)**
2023-12-26	**Իրավաբանական հասցեի փոփոխություն** **Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխություն)**
2024-03-07	**Գործադիր մարմնի ղեկավարի փոփոխություն**
2024-04-04	**Իրական սեփականատերերի վերաբերյալ նոր խմբագրությամբ հայտարարագրի**
2025-02-26	**Մասնակիցների փոփոխություն** **Կանոնադրության փոփոխություն (կանոնադրության լրացում/փոփոխությ**
2025-03-11	**Պաշտոնական կայքի և/կամ էլ.փոստի մասին տվյալների փոփոխություն**

Քաղվածքը տրամադրող՝ ԱՆԴԵՐՍԵՆ ԼԻԳԸԼ Դ

«ԱՆԴԵՐՍԵՆ ԼԻԳԼ ԴԱՎԻԹ» ՍՊԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԳԻՐ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿՆԻՔ